ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՀԱՆՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Ազգային ժողովի կանոնակարգ>> սահմանադրական օրենքի 123.1-րդ հոդվածի 4-րդ մասը և <<<Հանրագրերի մասին>> օրենքի 13-րդ հոդվածը, ինչպես նաև 2020 թվականի հունիսի 26-ին Ազգային ժողովի նախագահ Ա.ՄԻՐԶՈՅԱՆԻ կողմից հանձնաժողով ուղարկված հանրագիրը՝

ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մերժել հանրագրի հեղինակների կողմից առաջարկվող՝ <<Չծնված երեխայի կյանքի իրավունքի մասին>>, <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<<Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթը շրջանառության մեջ դնելու մասին առաջարկությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ

09 սեպտեմբերի 2020 թվական,
քաղ. Երեւան
ԱՍՈ-006-Լ